ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

Երկարամյա ուշացումով ընթերցողին է առաջարկվում «Դիվան հայ վիմագրության» հերթական պրակը: Այն ընդգրկում է ներկայիս Լոռու մարզի և հարևան Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթամարզի պատմա-ճարտարապետական հուշարձանների որմերից ընդօրինակված 1190 արձանագրություն, որոնց մի զգալի մասն առաջին անգամ է հրատարակվում:

Բաժինը նպատակահարմար գտավ գործի առաջին և հիմնական նախաձեռնող-կատարող, երջանկահիշատակ Ս. Բարխուդարյանի անվան կողքին որպես պրակի կազմողներ՝ նշել նաև մեծանուն հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանի և հայ վիմագրության անխոնջ ու հմուտ գիտակ Ս. Սաղումյանի անունները: Այդ քայլը համարում ենք հիմնավորված՝ պայմանավորելով պրակի ստեղծման մեջ վերջիններիս անգնահատելի ներդրմամբ:

Պրակում ընդգրկված են Լոռվա ամենանշանավոր և վիմագրերով հարուստ երկու հուշարձանախմբերի՝ Հաղբատի ու Սանահնի, Կ. Ղաֆադարյանի գիտական բարձրարժեք վերծանությամբ 445 արձանագրություն:

«Դիվան»-ի սույն պրակի լույս աշխարհ գալուն լայնածավալ ու անգնահատելի նպաստ է բերել Ս. Սաղումյանը, որը ոչ միայն իր անտիպ հավաքածուից տասնյակ նոր վիմագրեր է զետեղել ժողովածուում, ի նորո վերծանել նախկինում հրատարակված բազմաթիվ վիմագրեր, մեծաքանակ ճշգրտումներ կատարել, տվել նոր մեկնաբանություններ, այլև զգալիորեն հարստացրել է արձանագրությունների ծանոթագրությունները, վիմագրակիր հուշարձանների պատմա-ճարտարապետական նկարագրությունները (Ս. Բարխուդարյանը պրակի կազմման իր սկզբունքներին հավատարիմ՝ չափազանց համառոտ էր ծանոթագրում «Դիվան»-ի արձանագրությունները), հիմնովին և շահեկանորեն խմբագրել ամբողջ աշխատանքը: Ս. Սաղումյանը պրակի ծանոթագրությունների մեծագույն մասի փաստացի հեղինակն է՝ անշուշտ նկատի առնելով Ս. Բարխուդարյանի, Կ. Ղաֆադարյանի, Ալ. Մանուչարյանի ծանոթագրական նկատողությունները:

Պրակի խմբագրման, ծանոթագրման և լրացման գործում գնահատելի ներդրում ունի Ալ. Մանուչարյանը, որը բաժնի հանձնարարությամբ առաջինը ձեռնամուխ եղավ Ս. Բարխուդարյանի գիտական անտիպ ժառանգության այս հատորի հրատարակության պատրաստմանը:

Պրակը խմբագրել և հրատարակության են պատրաստել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի աշխատակիցներ՝ պատմ. գիտ. դոկտ. պրոֆեսոր Գր. Գրիգորյանը, պատմ. գիտ. թեկնածուներ Գ. Սարգսյանը, Աշ.

Սանուչարյանը, հավաքչական աշխատանքներին մասնակցել են գիտաշխատողներ Ռ. Գասպարյանը և Կ. Աստորյանը:

Ժողովածուի խմբագրման ընթացքում անհրաժեշտություն զգացվեց որոշ արձանագրությունների լրացուցիչ ձևնրագրման, որոնք տեքստում նշված են շեղագիր տառերով (*խմբ.*):

Ի տարբերություն «Դիվան»-ի նախորդ պրակների՝ սույն հատորում վերծանությունները ներկայացված են բնագրային տողանջատմամբ, առաջնորդվելով Կ. Դաֆթարյանի և Ս. Սաղումյանի սկզբունքով:

Բավական թվով վիմական բնագրեր ներկայացված են միայն վերծանությամբ, բազմաթիվ դեպքերում նաև առանց լուսանկարների, ինչն արդյունք է վերջիններիս պակասության և անհասանելիության: Նույն պատճառով Սանահնի և Հաղբատի շատ վիմագրերի գրչագրեր վերցված են Կ. Դաֆթարյանի համապատասխան աշխատություններից: